Գ 4

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԱԱԾ-ՏԱ և ԿԿԳՎ-ԲՄԱՊՁԲ-20/1-ՍԵՐՎԵՐ/1

N 11/262-2020

ք. Երևան «23» 03 2020 թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ի դեմս տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Լ. Քեսապլյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 149 599 800 (հարյուր քառասունինը միլիոն հինգ հարյուր իննսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը (համաձայն սույն պայմանագրի Հավելված 1-ի): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԱԾ **ք.Երևան, Նալբանդյան 104** **ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն** **Հ/Հ 900011301067** **ՀՎՀՀ 01507079**	**«Բի Լայն» ՍՊԸ** **ք. Երևան, Խանջյան 50** **«Ամերիաբանկ» ՓԲԸ** **Հ/Հ 1570017509080100** **ՀՎՀՀ 02522096**
Տնօրենի տեղակալ	**Գլխավոր տնօրեն**
Ա. Հակոբյան	**Լ. Քեսապլյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

«23» 03 Հավելված N 1
20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

11/262-2020

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
ընդհանուր կիրառմամբ դասակարգված գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	48821100/502	ցանցային սերվերներ	Hewlett Packard Enterprise, HPE 12000	**<u>1 հատ բլեյդ արկղ</u>** **Բլեյդային արկղի նկատմամբ ներկայացվող պահանջներ** Արկղը աջակցում է 12 կես բարձրության սերվերների տեղադրում մեկ արկղի շրջանակում, աջակցում է Intel Xeon պրոցեսորների վրա հիմնված երկպրոցեսորային և քառապրոցեսորային բլեյդ սերվերներ, մեկ արկղի շրջանակում հաշվողական մոդուլի հետ մեկտեղ աջակցում է 5 տվյալների պահպանման դարակների տեղադրում, ներառում է ներկառուցված "redundant" ղեկավարման մոդուլ հիմնական ցանցից առանձնացված ղեկավարման ցանցով արկղն ունի դյուրակիր համակարգչի և մոնիտորի լոկալ միացման համար նախատեսված USB և display պորտեր **Կոնվերգենտ հւսմակցման մոդուլներ** Համակարգը ներառում է երկու կոնվերգենտ համակցման մոդուլ, որոնցից յուրաքանչյուրն ունի հետևյալ հնարավորությունները՝ 1. կարողանում է դեպի յուրաքանչյուր սերվեր ապահովել մինչև 20Գ բ/վ կապուղի, որն իր	դրամ	149 599 800	149 599 800	1	ք. Երևան, Նալբան-դյան 104	1	30.06.2020թ

				հերթին բաժանվում է 4 Ethernet ինտերֆեյսի կամ երեք Ethernet ինտերֆեյսի ու 1 HBA-ի: HESA-ն կարողանում է աջակցել ինչպես FCoE/CEE անյպես էլ iSCSI պրոտոկոլներ 2. աջակցում է 6 հատ QSFP+ պորտեր արտաքին միացման համար, ընդ որում այդ պորտերն աջակցում են ինչպես Ethernet այնպես էլ FC: Աջակցում է 2 հատ QSFP+ պորտեր՝ հարակից մոդուլի հետ միացման համար: 3. կարողանում է ագրեգացնել 3 արկղեր՝ կոնսոլիդացնելով ցանցային միացումները: Ագրեգացիայի շրջանակներում սերվերների միջև Layer 2 ցանցային տրաֆիկի փոխանցումը հնարավոր է իրականացնել չօգտագործելով արտաքին կոմուտատորներ և օգտագործելով նշված մոդուլների վրա առկա պորտերը: 4. աջակցում է MLAG **Համակցման մոդուլներ** Աջակցում է FCoE, Ethernet, FC և SAS տեխնոլոգիաներ ապահովող համակցման մոդուլների տեղադրում, ինչպես նաև ցանցային կոմուտատորների աջակցում, որոնք ապահովում են 50Գբ/վ կապուղիներ դեպի սերվերներ և 100Գբ/վ կապուղիներ դեպի արտաքին կոմուտատորներ **Fibre Channel SAN համակցման մոդուլներ** համակարգը ներառում է երկու հատ Fiber Channel SAN համակցման մոդուլ, որոնցից յուրաքանչյուրն ունի հետևյալ պորտերը՝ 12 հատ FC, նախատեսված սերվերների միացման համար, 8 հատ FC SFP+ պորտեր և 4 հատ QSFP+ արտաքին միացման համար: **Սնուցման բլոկներ** Արկղն ամբողջությամբ համալրված է արտադրողի կողմից առաջարկվող							

				միաֆազ 220Վ, 50 Հց, փոփոխական հոսանքով աշխատող, պլատինիում մակարդակի էֆեկտիվությամբ սնուցման բլոկերնով, որոնք կարողանում են ապահովել N+1 կամ N+N (որտեղ N>1) ռեժիմի խափանումների նկատմամբ կայունության կոնֆիգուրացիա **Արկղի ղեկավարման մոդուլներին ներկայացվող պահանջներ** Սարքը ներառում է ղեկավարման ապարատա-ծրագրային սարք՝ տեղադրված արկղի մեջ: Կարողանում է նաև ղեկավարել մեկ ղեկավարման օղակում ընդգրկված այլ արկղեր ևս: Աջակցում է մեկ արկղի, կամ նույն ղեկավարման օղակում գտնվող մի քանի արկղերում առկա կոմպոնենտների ավտամատ հայտնաբերում: Կարողանամ է սերվերների համար իրականացնել միկրոկոդի և օպերացիոն համակարգի դրայվերների թարմացում Ապահովում է 10Գ բ/վ առանձնացված ղեկավարման ցանց **Օպերացիոն համակարգի պատկերների տրամադրման համակարգ** (OS Image Streaming system) Կարողանամ է աջակցել արկղում տեղադրվող, օպերացիոն համակարգի պատկերների տրամադրման համար նախատեսված ծրագրա-ապարատային սարք **Տվյալների պահոց և դրա ղեկավարման համակարգ** Ունի ներքին և արտաքին տվյալների պահոցների ղեկավարման, տրամադրման (DAS, SAN) և կոնֆիգուրացման աջակցություն, աջակցում է կաղապարների միջոցով տվյալների պահոցների կցումը սերվերներին **Սարքի պահանջները**							

				Սարքը կարողանում է առկա հաշվողական, տվյալների պահպանման (storage) և ցանցային ռեսուրսների համախմբից տրամադրել վիրտուալ, ֆիզիկական և կոնտեյներային ենթակառուցվածք հաշվողական, տվյալների պահպանման ռեսուրսների տրամադրումը, ինչպես նաև սերվերային մասի ցանցային կոնֆիգուրացումը հնարավոր է կոնֆիգուրացնել մեկ ղեկավարման վահանակից: Սարքն աջակցում է API-ների միջոցով ինտեգրում այնպիսի ղեկավարման և ավտոմատացման գործիքների հետ, ինչպիսիք են Microsoft SystemsCenter և VMWare vCenter Սարքն աջակցում է սկրիպտների կիրառմամբ հաշվողական ռեսուրսների վերահասցեավորում տարբեր աշխատանքային ծանրաբեռնվածությունների միջև **<u>6 հատ բլեյդ սերվեր</u>** **Շասի** Կես բարձրության, բլեյդ արկղում տեղադրվելու համար է **Պրոցեսոր** Պրոցեսորների քանակը - 2, յուրաքանչյուր պրոցեսորի միջուկների քանակը - 20, հաճախականությունը 2.1 Ghz: **Օպերատիվ հիշողությունը** 384GB տեղադրված օպերատիվ հիշողություն, մինչև 1.5ՏԲ աճելու հնարավորությամբ **Կրիչներ և RIAD կոնտրոլերներ** Համակարգը ներառում է ներկառուցված ծրագրային SATA RAID կոնտրոլեր: Ունի 2 հատ micro-SD քարտ 8 ԳԲ ծավալով **Ցանցային քարտ** Տեղադրված է երկպորտանի 20Գբ/վ ցանցային ադապտեր, որը կարող է							

				ապահովել եղած պորտերից յուրաքանչյուրի բաժանումը 3 հատ Ethernet և 1 FCoE/iSCSI HBA պորտերի Տեղադրված է երկպորտանի 16Գբ/վ FC ադապտեր SAN համակցման մոդողներին միանալու համար **PCIe սլոտներ** Աջակցում է 3 հատ x16 PCIe 3.0 մեզանին սլոտներ, որոնք կարող են աջակցել Ethernet, FC և SAS ադապտերներ **Ստանդարտներ** PCIe 3.0 համապատասխանություն Microsoft® Logo certifications USB 3.0 համապատասխանություն Active Directory v1.0 UEFI (Unified Extensible Firmware Interface Forum) Redfish API Advanced Encryption Standard (AES) Triple Data Encryption Standard (3DES) **Աջակցվող օպերացիոն համակարգերը** Microsoft Windows Server Microsoft Hyper-V Server Red Hat Enterprise Linux (RHEL) Vmware Citrix Xenserver **Ղեկավարում** Ներկառուցված ղեկավարման համակարգ՝ հեռակա ղեկավարման հնարավորություն, բրաուզերի վրա հիմնված ղեկավարման գրաֆիկական remote console, որն ապահովում է սերվերի բեռնումը՝ օգտագործելով USB/CD/DVD, ունի սերվերի հոսանքի անջատման/միացման վիրտուալ կոճակ: Նշված ֆունկցիոնալը ապահովելու համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը ներառված են **<u>1 հատ տվյալների պահպանման համակարգ</u>** **Կոնվերգենտ/Միասնական (Converge/**							

				Unified Storage) Տվյալների համակարգ Տվյալների պահպանման համակարգը (այսուհետ ՏՊՀ) իրական կոնվերգենտ է, մեկ միկրոկոդով և օպերացիոն համակարգով, կոնտրոլերները նախատեսված և ֆայլային, և բլոկային սերվիսների համար: ՏՊՀ-ն Front-End-ից դեպի Back-end տվյալների փոխանցման ամբողջ շղթայում ապահովում է 12 Գբ/վ **Օպերացիոն համակարգերի աջակցությունը** ունի աջակցություն հետևյալ օպերացիոն համակարգերի հետ. Microsoft Windows Server 2012, VMware vSphere, Linux **Դիսկեր և ընդլայնողականություն** ՏՊՀ-ն ունի 8 հատ 1.92 ՏԲ ծավալով SSD, 16 հատ 1.8 ՏԲ 10K կրիչներ, 12 հատ 4ՏԲ 7.2K կրիչներ ՏՊՀ-ն ունի հնարավորություն տեղակայելու մինչև 120 հատ SSD, ՏՊՀ-ն ունի հնարավորություն աճելու մինչև 400 ՏԲ: **Քեշ** ՏՊՀ-ի կոնտրոլերների զույգն ունի մինչև 64 ԳԲ քեշ: ՏՊՀ-ն ունի flash cache-ի աջակցություն, օգտագործելով SSD-ները: ԵՎ ֆայլային, և բլոկային օպերացիաների դեպքում հնարավոր է լինի օգտվել Flash Cache-ից: **Պրոցեսորային հզորություն** ՏՊՀ-ն ունի երկու հատ 6 միջուկանի 2.2 ԳՀց պրոցեսորներ: **Կոնտրոլերները** ՏՊՀ-ն ունի երկու կոնտրոլլեր, որոնք աշխատում են իրական active-active ռեժիմում այնպես, որ յուրաքանչյուր LUN հնարավոր է ներկայացնել բոլոր կոնտրոլլերներով՝ սիմետրիկ ձևով: **Խափանման եզակի կետ** ՏՊՀ-ն կոնֆիգուրացված է այնպես, որ չունենա կոնտրոլերների քարտերի, քեշ							

				հիշողության, հովացման բլոկերի, հոսանքի սնուցման աղբյուրների և այլնի խափանման եզակի կետ: **Դիսկերի աջակցություն** ՏՊՀ-ն աջակցում է երկպորտանի 1200 10K, 1800 10K ԳԲ hot-pluggable Enterprise SAS կոշտ սկավառակներ, 2000 7.2K 4000 7.2KNL, 8000 7.2K ԳԲ SAS կոշտ սկավառակներ և 920ԳԲ, 1.92ՏԲ, 3.84ՏԲ, 7.68ՏԲ, 15.36ՏԲ SSD կրիչներ **RAID աջակցություն և վիրտուալիզացիա** 1. ՏՊՀ-ն աջակցում է Raid 1, 5 և 6. 2. ՏՊՀ-ն ունի վիտուալիզացում, որը տալիս է հնարավորություն կառուցել Raid 1. Raid 5, Raid 6 օգտագործելով դիսկերից տրամաբանական տարածքներ, այլ ոչ թե ամբողջական հատկացված ֆիզիկական դիսկեր 3. Յուրաքանչյուր դիսկ ունի հնարավորություն մասնակցել մի քանի RAID կոնֆիգուրացիաներին միաժամանակ: **Պրոտոկոլներ** ՏՊՀ-ն ունի FC, ISCSI, FCOE, SMB 3.0, NFS V4, FTP/FTPS աջակություն **Պորտեր** 1. ՏՊՀ-ն ունի 4 հատ 16 Գբ/վ FC պորտ 2. ՏՊՀ-ն ունի մոդուլ տեղադրելու հնարավորություն, որը ապահովում է լրացուցիչ 1/10/16 Գբ/վ պորտեր 3. ՏՊՀ-ն ունի ևս երկու IP պորտ, ռեպլիկացիայի համար **Գլոբալ Spare** ՏՊՀ-ն ունի բաշխված (distributed) Global hot Spare առաջարկվող դիսկերի համար **Արտադրողականություն և QoS** ՏՊՀ-ն կարողանում է օգտագործել 30-ից ավել դիսկեր մեկ RAID խմբի շրջանակում ՏՊՀ-ն ունի quality of service (QoS)							

				կոնֆիգուրացնելու հնարավորություն **Սպասարկում** ՏՊՀ-ն թույլ է տալիս կատարել և կոնտրոլերների և դիսկերի ծրագրային ապահովման թարմացում առանց դադարի ռեժիմում **Snapshot / Clone** ՏՊՀ-ն ունի հնարավորություն կատարել volume-ների snapshot և ամբողջական կրկնորինակում (Clone) Կվոտա and Antivirus Scanning 1. ՏՊՀ-ն ֆայլային սերվիսի օպերացիաների համար ունի hard and soft կվոտավորման մեխանիզմի աջակցություն. 2. ՏՊՀ-ն ֆայլային սերվիսի օպերացիաների համար ունի անտիվիրուսային համակարգերի հետ ինտեգրացիայի հնարավորություն **Ղեկավարում** ՏՊՀ-ի հետ տրամադրվող ղեկավարման ծրագիրն ունի հնարավորություն ղեկավարել նույն ընտանիքի մի քանի ՏՊՀ-ներ **Tiering** 1. ՏՊՀ-ն տասլիս է հնարավորություն կատարել Volume-ների օնլայն միգրացիա մեկ RAID- կոնֆիգուրացիայից մյուսը 2. ՏՊՀ-ն ունի հնարավորություն կատարել automatically Policy based Sub-Lun Data Migration դիսկերի մակարդակների (NL, 10K, 15K, SSD) միջև **Լիցենզիաներ** ՏՊՀ-ն ներառում է բոլոր այն լիցենզիաները, որոնք անհրաժեշտ են վերը նշված գործառույթներն իրականացնելու համար **Ռեպլիկացիա** 1. ՏՊՀ-ն ունի նույն ընտանիքի այլ ՏՊՀ-ների հետ ապարատային հենքի վրա աշխատող ռեպլիկացիայի աջակցություն 2. ՏՊՀ-ն ունի եռակողմ (երեք տվյալների							

				կենտրոն) ռեպլիկացիայի աջակցություն 3. Ռեպլիկացիան ինկրեմենտալ է ՏՊՀ-ն ներառում է բոլոր այն լիցենզիաները (եթե դրանք անհրաժեշտ են), որոնք անհրաժեշտ են վերը նշված գործառույթներն իրականացնելու համար **<u>4 հատ արտաքին ցանցային բաժանարար</u>** **Պորտեր** 24 հատ 1000/10000 SFP+ պորտ 2 հատ QSFP+ 40GbE պորտ, 1 հատ QSFP28 100GbE պորտ 1 կոնսոլային պորտ, 1 RJ-45 ղեկավարման պորտ, 1 հատ SFP ղեկավարման պորտ 960 Gbps Switching/Routing թողունակություն Throughput 710 Mpps երկու հատ, խափանումների նկատմամբ կայուն (redundant) AC սնուցման բլոկ Cut-through, Reversible airflow, IPv4 and IPv6 Static Routing, RIP, RIPng, OSPF, OSPFv3, IS IS, IS ISv6, BGP, VRRP, SNMPvl, v2 և v3, NTP, Port mirroring, LLDP, sFlow (RFC 3176), ACLs, RADIUS/TACACS+ աուտենտիֆիկացիա, IEEE 802.1X և RADIUS network logins, Port security, EEEE 802.1 Qbb Priority Flow Control (PFC) և Data Center Bridging Exchange (DCBX), Fibre Channel over Ethernet (FCoE)' ներառուած FCF, Transit and NPV, Jumbo frames մինչև 10,000 բայթ, STP (IEEE 802.1 D), Rapid STP (RSTP, IEEE 802.1w) and Multiple STP (MSTP) IEEE 802.1s), DLDP, IEEE 802.3x Flow Control, IEEE 802.3ad, 4,094 VLAN-ների աջակցություն. VLAN Mapping, Q-in-Q and Selective Q-in-Q, IGMP Snooping v1/v2/v3, PIM Snooping, MLD snooping v1/v2 and IPv6 PIM Snooping, ARP, DHCP, IEEE 802.1AG, IEEE 802.3AH, ստեկավորում, որը հնարավորություն է տալիս սվիչերը							

				ղեկավարել և կոնֆիգուրացնել ինչպես մեկ ընդհանուր սվիչ, մեկ ընդհանուր ip հասցեով **Լրացուցիչ մոդուլներ** Յուրաքանչյուր բաժանարար ներառում է համատեղելի հետևյալ մոդուլները՝ 10 Գբ/վSFP+ 40կմ հեռավորություն ապահովող Single mode LC - 1 հատ 10 Գբ/վ SFP+ 10 կմ հեռավորություն ապահովող Single mode LC - 3 հատ 1G SFP RJ45 տրանսիվեր - 4 հատ **Լրացուցիչ կոմպոնենտներ** Ներառում է ստեկավորմուսն համար անհրաժեշտ կոմպոնենտներ Առաջին էջում նկարագրված կոնվերգենտ մոդուլներին միացման համար նախատեսված 2 հատ QSFP+ to 4x10 SFP+ DAC մալուխ **Լրացուցիչ պահանջներ** Բոլոր սարքավորումները մեկ արտադրողից են և ինտեգրացված են որպես մեկ միասնական ծրագրա- ապարատային համիլիր համակարգ: Համակարգը միանում է ՏՊՀ էջում նշված համակարգին և արտաքին կոմուտատոր էջում նկարագրված սարքերին Համակարգը ներառում է միացումներն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր մալուխները և փոխարկիչները: Համակարգի տեղադրումը, գործարկումը և կարգաբերումը (Բլեյդ արկղի, սերվերների և ՏՊՀ համակցումը և կլաստերիզացիայի, վիրտուալիզացիայի և նրանց ներքին ցանցի ապահովումը) պետք է իրականացվի արտադրողի սերտիֆիկացված մասնագետների կողմից: Բոլոր սարքավորումների համար տրամադրվում է արտադրողի ավտորիզացիոն նամակ (MAF): Բոլոր սարքավորումների վրա տրամադրվում է արտադրողի կողմից 3 տարվա տեխ. Աջակցում՝ 24x7 ռեժիմում սերվիս-դեպք							

				գրանցելու հնարավորությամբ, 4 ժամվա արձագանքման մաքսիմալ ժամանակահատվածով: Սարքավորումները, դրանց ծրագրային ապահովում փոխհամատեղելի է HPE Synergy 12000 բլեյդ արկղի սարքավորումների և դրանց ծրագրային ապահովման հետ: Երաշխիքային ժամկետը 1095 օրացուցային օր:							

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Բի Լայն» ՍՊԸ
ք. Երևան, Խանջյան 50
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570017509080100
ՀՎՀՀ 02522096

Գլխավոր տնօրեն

Լ. Քեսապլյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«23» 03

11/262-2020

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	48821100/502	ցանցային սերվերներ	0	0	0	0	149 599 800	149 599 800	149 599 800	149 599 800	149 599 800	149 599 800	149 599 800	149 599 800

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Բի Լայն» ՍՊԸ
ք. Երևան, Խանջյան 50
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570017509080100
ՀՎՀՀ 02522096

Գլխավոր տնօրեն

Լ. Քեսապլյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն